ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շիրակի պետական համալսարան

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա<<էլ >> բառի տարբեր խոսքիմասային կիրառությունը

Կատարող Նաիրա Թադևոսյան

Ղեկավար՝ Մ.Խաչատրյան, Ա. Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

<<էլ >> բառի տարբեր խոսքիմասային կիրառությունը

Ներածություն

Հայերենը իր բազմադարյան պատմության մեջ բազմաձև ու բազմապիսի փորձություններիէ ենթարկվելայնպես, ինչպեսհայժողովուրդը՝ ընթացքում շտկվելով ուինքնամաքրվելով:

Լինելով<<ճկուն, բայցմիևնույնպահինկոպիտ>>՝ մերլեզունունի դրսևորման բազմազան ու տարատեսակ հնարավորություններ. և՛ բառային, և՛ քերականական, և՛ խոսքիմասային հոմանիշություններ:

Այս տարատեսակ հնարավորություններով ու դրսևորումներով օժտված բառերից մեկը <<էլ>> բառն է: Չնայած խոսքիմասային հոմանիշությունը հայերենում բավականինշատ է, դրանովէլ հեշտանումէ թե՛ գրական, թե՛ գեղարվեստական և թե՛ առօրյա խոսակցական խոսքկազմելը:

Հոմանիշ բառերի գործածությունը խոսքը բազմազան, բազմերանգ, գեղեցիկ ու դիպուկ դարձնելու լայն հնարավորություն է ստեղծում: Թե՛ առօրյա, թե՛ գեղարվեստական խոսքում հոմանիշների ճիշտ ընտրությամբ հնարավոր է խուսափել կրկնությունից, խոսքին պատկերավորություն հաղորդել:

Հայերենում ընդհանրական խոսքիմասային պատկանելության բառերը բավականին մեծ թիվ են կազմում, օրինակ՝

- **Ածական-գոյական**

  ծերմարդ–հարցրեցծերին

  հիվանդ մարդ – այցելեց հիվանդին

  երկուշաբթիօրը–երկուշաբթինծանրէ

  վարպետՕհանը–վարպետիմասին

- **Գոյական-մակբայ**

  Ծնունդս վաղն է: - Վաղը ուշ կլինի:

  Այսօր է ծնունդս: - Այսօր ուրիշ է կարգը:

- **Ածական-մակբայ**

  արագ ընթացք- արագ ընթանալ

  դանդաղվազք–դանդաղվազել

  եռապատիկ եկամուտ – եռապատիկ հաշվել

  միաձայն երգչախումբ – միաձայն երգել

- **Կապ-շաղկապ**

  Մինչև տուն կուղեկցեմ: - Մինչև տուն կհասներ, մութն ընկավ:

  Չնայած վատ եղանակին էքսկուրսիան կազմակերպվեց: - Չնայած եղանակը վատ էր, էքսկուրսիան իրականացավ:

- **Կապ-մակբայ**

  Տան առաջ այգի կար: - Առաջ տունը ուրախ էր:

- **Ածական-գոյական-մակբայ**

  Ուղիղգիծ–ուղիղների միջև - կանգնել ուղիղ Եվ

  վերջապես

- **Մկաբայ-շաղկապ-վերաբերական- դերանուն**

Էլ-ը որպես մակբայ

Մակբայը նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի խմբին է պատկանում: Մակբայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողության կատարման հատկանիշ ու հանգամանք՝ տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ:

Մակբայն՝ իբրև խոսքի մաս, բնութագրվում է նրանով, որ ցույց է տալիս գործողության հատկանիշ և հատկանիշի հատկանիշ:

Շատ լեզուներում մակբայը համարվում է չթեքվող խոսքի մաս: Միայն 2 լեզվում է թեքվում, որտեղ մակբայները կարող են հանդես գալ որպես համաձայնեցնող վերջավորություն:

Ժամանակի մակբայի մեջ է մտնում էլը՝ պատասխանելով երբ հարցին: Ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը:

Էլը որպես մակբայ հոմանիշային աղերս ունի այլևս ժամանակի մակբայի և երբեմն նաև նորից չափի մակբայի հետ:

Օրինակ՝

Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով… Ինձ

չես սիրում, չես ափսոսում,
Էլ չես ասում՝ ինչ կըլնեմ ես…

Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Էլ չի պրծնելու երբեք իմ ձեռից…

Տես կըխռովեմ, լաց կըլնեմ ես ***Էլ***…

Հ.Թումանյան

Էլ-ը որպեսշաղկապ

Շաղկապ, նյութական իմաստից զուրկ, քերականական հարաբերություններ արտահայտող խոսքի մաս: Արտահայտում է առարկաների, երևույթների միջև դրսևորվող համադասական հարաբերություններ:

Շաղկապներն իրար են կապում նախադասության համազոր և համադաս նախադասություններ, իսկ բարդ ստորադասական նախադասություններում՝ երկրորդական նախադասությունները գլխավորի և միմյանց հետ:

Համադասական շաղկապների դերը համադաս անդամների ու նախադասությունների կապակցումն է: Այս շաղկապները կապակցում են նախադասության բազմակի անդամներ կամ համադաս նախադասություններ:Համադասական շաղկապներից են՝ և,ու,իսկ,բայց,էլ,ապա,սակայն:

Համադասական շաղկապների ներհակական և հավելական իմաստներով է դրսևորվում էլ-ը:

Որպես նեռրհակական համապատասխանում է իսկ համադասական շաղկապին, սակայն, ի տարբերություն իսկ համադասական շաղկապի, ունի դիրքային տարբերություն: Եթե իսկ-ը դրվում է բարդ համադասական նախադասության երկրորդ բաղադրիչ նախադասության սկզբում, ապա էլ-ը դրվում է բարդ համադասական նախադասության երկրորդ բաղադրիչ նախադասության մեջ ենթակայից հետո՝ որպես երկրորդ բառ:

Օրինակ՝

Նրա անբախտ շիրմիր վրա
Պաղ ջուր ածա աղբյուրի, Դու
էլգնանորսերարա էդպեսէ
կարգնաշխաարհի:

Սիրտըս ***էլ*** միշտ փա՛կ, սիրտըս ***էլ*** միշտ մո՛ւթ, Ի՞նչ կա, չըգիտեմ, իմ առջև պահված…

Հ.Թոնումանյան

Հասմիկը թատրոն գնաց, Աստղիկն ***էլ*** սրճարան:

Նույնն է՝ Հասմիկը թատրոն գնաց, իսկ Աստղիկը՝ սրճարան:

Հավելական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները, հաջորդելով մեկը մյուսին, ծավալում են հաղորդման սահմանները՝ բովանդակությամբ չհակասելով ու չհակադրվելով միմյանց: Այս նախադասությունները բնորոշվում են նրանով, որ բաղադրիչներում ունենում են երկու կամ ավելի ենթականեր, որոնց վերագրվում են երկու կամ ավելի հատկանիշներ:

Էլ-ը համադասական շաղկապի հավելական իմաստով՝ այսինքն և շաղկապի հոմանիշությամբ լինում է.

Չէ՛, Անո՛ւշ, քիչ ***էլ***, մի քիչ ***էլ*** մնա…

Դուք ***էլ***, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք լուռ…

Հ.Թոնումանյան

Շաղկապական մյուս գործածությունը համադասական շաաղկապի միավորական իմաոստով դրսևորումն է:

Միավորական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները միավորվում են մեկ ընդհանուր ամբողջի մեջ՝ արտահայտելով այնպիսի գործողություններ, եղելություններ, որոնք ունենում են մեկ և նույն ենթական: Կառուցվածքային տեսակետից այս նախադասությունները բնութագրվում են նրանով, որ բաղադրիչներից մեկում մեկ և նույն ենթակային վերագրվում են երկու կամ ավելի հատկանիշներ: Կապակցությունն իրացվում է և, ու, այլև, նաև, ևս, և…և, թե…թե, էլ, էլ…էլ, ո՛չ…ո՛չ, ո՛չ միայն…այլև՛, և նման միավորիչ շաղկապներով:

Օրինակ՝

Է՛լ գողփիսո, ***Է՛լ*** քաչալշուն,
Բանը հասավ դիվան բաշուն:

Հ.Թումանյան

Որպես կրկնադիր շաղկապ՝ կետադրվում են առհասարակ (է՛լ . . . ,է՛լ) կետադրվում են շեշտ-ստորակետով:

Միայն էլ-ից կազմված կրկնադիր շաղկապն է, որ կարող է լինել նաև հետադաս. օրինակ՝

Եկել էին հարսնացուի հայրն ***է՛լ,*** մայրն ***է՛լ***, քույրն ***է՛լ***:

Հետադաս էլ…էլ-ը կարող է նաև անշեշտ լինել:

Օրինակ՝

Հնձվորը ոտքով դեն հրեց որդուն ***էլ***, դատարկ տուփերն ***էլ***:

Ակ.Բակունց

Էլ-ը որպես դերանուն

Դերանուն, անվան դեր կատարող բառ: Խոսքում գոյական, ածական, թվական անունները չկրկնելու համար հաճախ դրանք փոխարինվում են անվան դեր կատարող բառերով, այսինքն՝ դերանուններով: Այլ կերպ ասած՝ դերանուն են կոչվում այն բառերը, որոնք մատնացույց են անում առարկա, հատկանիշ, քանակ կամ որակ՝ առանց դրանք անվանելու: Դերանունները հանդես են գալիս իրենց ութ տեսակներով, դրանք են անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ և ժխտական:

Անորոշ դերանունները մատնացույց են անում անորոշ անձ, առարկա և կամ անձի ու առարկայի անորոշ հատկություն, քանակ՝ առանց դրանք անվանելու: Անորոշ դերանուններն են՝ ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, մեկնումեկը, մի, մի քանի, մի քանիսը, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, էլ, որոշ, որևէ, ովևէ, երբևէ, երբևիցե, որևիցե: Ժխտական դերանունները մատնացույց են անում ամբողջությամբ ժխտվող առարկաներ կամ անձեր, առանց դրանք անվանելու:

Դերաբունների հետ էլ բառը առնչվում է որպես այլ, ուրիշ անորոշ դերանվանը հոմանիշ:

Օրինակ՝

Էլ ինչ կարող է ասել իմ երգը:

Կան և հոլանի բազուկներ, և ***Էլ*** ինչեր չկան ու ինչ ձևեր:

Երբեմն էլ գործածական է նույնպես ցուցական դերանվան իմաստին հոմանիշ, Օրինակ՝

Յարս էլ խմե՞ց էն ջրից…

Էլ-ը որպես վերաբերական

Վերաբերական կոչվում են այն բառերը, որոնք արտահայտում են խոսողի իմացական կամ գնահատողական վերաբերմունքը և եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը կամ որևէ անդամ:

Էլ-ի առնչությունը վերաբերականի հետ բավականին ընդգրկուն է.

- Այն մի դեպքում արտահայտում է զիջականություն՝ հոմանիշվելով գոնե վերաբերականի հետ.

  Օրինակ՝

  Անձրև **էլ** չկա, որ մի քիչ հովն ընկնի:

- Մեկ այլ դեպքում արտահայտում է հաստատում և սաստկացնում է ասվածը Օրինակ՝

  Սպասածի պես **էլ** եղավ. թշնամին ետ քաշվեց:

- Մյուս դեպքում արտահայտում է անսպասելիություն, հանկարծակիություն Օրինակ՝

  Մեկ **էլ**, ըհը, աղվեսն եկավ:

- Նաև արտահայտում է զայրույթ, դժգոհություն, բա, հապա, միթե

  Օրինակ՝

  Մարդ **էլ** ընկերոջը կխաբի՞:

- Ինչպես նաև մեկից բարձր թվականների հետ ցույց է տալիս հավաքականություն, թվականի ցույց տված քանակով միավորները միասին, բոլորը առանց բացառության

Օրինակ՝

Զորսն **էլ** այստեղ են:

- հարցական դերանունների հետ, հարցման սաստկացում, նույնիսկ, անգամ Օրինակ՝

  Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր…

- ժխտական կամ հարցական բայաձևերի հետ ցույց է տալիս մի բան ծայրահեղ լինելը, բոլորովին, այլևս

Օրինակ՝

Է՛լ խոսքչունի…

Էլ չի խոսեց Արաքսը…

Եզրակացություն

Ես դպրոցական տարիներին շփոթելեմ էլ բառի կիրառության խոսքիմասային ոլորտները:

Աշխատանքային գործունեության ընթացքում միշտ «զգույշ» էի կիրառում:
Բայց ընթացքն ու բազմաթիվ վերլուծությունները, հանդիպած օրինակները, առօրյա խոսքում գործածությունը հանգեցրեց այն կետին, որ հասկանալի եղավ մի պարզ ճշմարտություն. որքան խորն է հայոց լեզուն, այնքան խորքային է նրա ամենապարզ թվացող դրսևորումն անգամ:

Հասկացա, որ, նաև խոստովանում եմ, որ չեմ դադարել սովորել, սովորում եմ ավելի, յուրաքանչյուր աշակերտի հետ, սովորեցնելուն զուգահեռ:

Գրականություն

- Յ. Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հայոց լեզու Ձևաբանություն
- Հովի. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան – Հայոց լեզու 7-8 դասարանի դասագրքեր
- Հ.Թումանյան-երկեր
- Ակ.Բակունց-երկեր
- Եղ.Չարենց-երկեր